

ՄԱՍԻՍ



ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՄԵՆ ԾԱՐԱԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ
Ռուսաստան
Եւրոպա

40 Ղրուշ
4 Բուլղի
10 Ֆրանք

ՀԱՍՑԷ

Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, քիւ 3-4



ՃՐԱՆՍՈՒՄ ԳՕԲԵԷ

ԱՆԳԱՄ ՃՐԱՆՍՈՒՄ ԱԿԱԴԵՄԻՅԱ

ՀԻՆԸ ՈՒ ՆՈՐԸ

Քանի մը օրէն Վարչութեան երկամեայ շրջանը կը լրանայ ու ընդհանուր անտարբերութեան մէջ ծնած այս երկու ժողովներն՝ ընդհանուր անտարբերութեան մէջ պիտի երթան թաղուիլ:

Իրենց պատիւը սա պիտի ըլլայ որ յուսախաբութեանց ու պատրանքի օրեր չի տուին մեզի, այն գերազանց պատճառով որ ու եւ է ակնկալութիւն ալ չէին տուած:

Օրագիրներու մէջ պարբերաբար տեսնուած սղագրութիւններէն զատ, որով իր որոշումները կը հաղորդուէին մեր հասարակութեան, և որոնք հին ատենուան քուրմերու պատգամոց կը նմանէին յաճախ, իր գործունէութիւնը՝ դուրս չի թափանցեց ու արդէն թերահաւատ մեր ժողովուրդին մէջ չի կրցաւ իրեն հաւատացող մը գտնել:

Սուոյգն այն է որ բարոյական իշխանութիւնը ունեւորին համերաշխութիւնը — այն որ գաղափարաց ու տեսակէտներու միութենէն կը ծագի և ոչ թէ զիրար չվշտացնելու յարատեւ ջանքէն, — պակեցաւ իրեն ու այս պայմաններուն մէջ պարագայները տարին զինքը, մինչդեռ պէտք էր որ ինքը պարագայները տանէր:

Սակայն եթէ կուսակից չունեցան այս ժողովականները, գոնէ հակառակորդ ալ չունեցան ընաւ, և այսօր, երբ կը պատրաստուին իրենց պաշտօնները ձգելու, ո՛չ յաւ կը թողուն ետեւին, ո՛չ ուրախութիւն:

* * *

Բաղդատական հաշիւով ուրեմն, ներկայ Վարչութիւնը իր նախորդէն բաղդաւոր է: Առեւտրական սենեակը, որ նախորդ Քաղաքական Ժո-

ղով կոչուեցաւ, աւելի ձախող վերջաւորութիւն մը ունեւաւ: Անոր հեռացումը՝ ճշմարիտ ակտիւանք մը եղաւ մեր հասարակութեան. երբէք ապիկարութիւնը՝ ցաւալի պարագաներու բերմամբ՝ այսքան յայտնի ու մատնացոյց եղած չէր: Մեր հասարակութիւնը՝ գործոց գլուխը վաճառականներ բերուելուն փորձը կատարեց ու զոյջաց. վասն զի Քաղաքական Ժողովոյ մէջ պաշտօնավարութեան համար չբաւեր խոհեմ մատակարարի մը ձեռնհասութիւն որ վաճառականներուն վրայ կրնայ գլուխուիլ:

Այս պատճառներով ըսինք ահա որ ներկայ Վարչութիւնը եթէ իրեն համար խանդավառ բարեկամներ չձգէր, գէթ իր նախորդին պէս ընդհանուր դժգոհութեան մէջ չի զատուիր մենէ:

* * *

Իր յաջորդը. ո՞վ գիտէ. զինքը ընտրելիք ժողովէն դատելով՝ բարի գուշակութիւն մը ընելու անկարող կըլդանք ինքզինքնիս: Ընտրութեան պահուն՝ չի պիտի վնասուեն երբէք մարդը որ գործին պէտք է, այլ պիտի ջանան որ գործը մարդուն պէտք ըլլայ: Անձնական նկատումները, անձուկ մտածումները, աներկբայ պիտի յաղ են այս անգամ ալ ճշմարիտ արժանիքին ու կարողութեան: Այնպէս որ մեր եկեղեցիները ու գաղոցները վարելու նոր ձեւեր ու նոր մարմիններ պիտի հաստատուին. Թաղական Խորհուրդները՝ Խնամակալութիւններու, Խնամակալութիւնները՝ Միւթէվէլլիութեան պիտի վերածուին. յետագարձ շարժումը, որ սկսած է արդէն, աւելի ուժով յառաջ պիտի տարուի:

* * *

Ու մենք պիտի շարունակենք ծիծաղիլ այս ամենուն վրայ. վասն զի

հանրական բարոյականի անկումը դուրսնույ այս երեւոյթները, հետզհետէ աչքի զարնելով՝ իրենց քողարկած ագեգութիւնները պիտի զգուեցնեն ամենքը, մեր կրթական ու եկեղեցական հաստատութեանց մէջ՝ կարգ ու կանոնը այս անկարգութենէն պիտի ծագի վերջապէս. այն խոնարհ մակարդակէն ուր մեր բարքերը հասած են հիմայ, զարգացումը պիտի սկսի այնքան աւելի ստուգութեամբ որքան դանդաղ ու անզգալի եղած է փոստյումը:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՄ ԳԵՁ ԽԵՒԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՊԵՆՈՅ ԵՒ ԱՐՁԱԿԵԼՈՅ

Ատեն մը տնտեսները կը խառնուէին դպրոցներուն. հիմայ Թաղ խորհուրդներու գրադիրներն են որ մեր վարժարանները կը կառավարեն:

Բերայի Թաղը իրաւամբ կրնայ պարծիլ իր գրադիրովը: Այդ մարդը սովորական գրադիր մը չէ որ վարժուած է գրելու «Պատուարժան Թաղական Խորհուրդը... կամ Վսեմաշուք Ատենապետը» ռամիկ բանաձեւերով ու ապուշ պարբերութիւններով շինուած նամակներ. աւելի բան մըն է ինքը, մանաւանդ այն ատենէն ի վեր՝ յորմէ հետէ Թաղ Խորհուրդը բան մը ըլլալէ զաղրած է: Իր բազմազան պաշտօններուն վրայ Արուեստանոցի տեսչութիւնն ալ աւելցած ըլլալու է: Անշուշտ քանի որ իր անձնական հեղինակութեամբը Արուեստանոցի երկու լաւագոյն աշակերտուհիները ճամբու դըրած է, յորմէ հետէ ասոնք համարձակեր էին զժգոհ երեւալ նորեկ վերակացու օրիորդէ մը որ կը կոչուի Մատնաղէլ Գրիսթին Աստալ և որ օտարաշաւան ըլլալուն՝ պղտիկ propagande մը սկսած էր հոն ու լուսաւորչականութիւնը կ'արհամարհէր:

Հինգշաբթի առաւօտ տեւանք այս արտաքսեալները որք կարծւոյ թէ պարզ գրադիր մը զիրենք վստուելու իրաւունք չունէր, Խնամակալութեան սրտմեր էին իրենց ցաւերը: Բայց Խնամակալութիւնը

չէր կրնար չի ճանչնալ և իր հաշույն չընդունիլ ինչ որ դործուած էր իր գրադիրն կողմէն. անոր վստածը վստած էր. Թաղական Խորհուրդը անոր տուած էր կապելու և արձակելու իրաւունքը:

Մեր կողմէն խորհրդածութիւն մը աւելորդ է:

ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ

ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ

Իւսկիւտար, 1870 դեկտմ. 21

Բարեկամ,

Անշուշտ կը ներես ինձ եթէ մեր բաժանման յաջորդող զգացումները լուսթեան տակ թաղեցի, եթէ չբացի ծանր շուրթերս քեզ «բարով նստիս» մաղթելու. անշուշտ եմ որ լաւ ես և առողջ, հիմա գոնե վառարանի մը ճարձատուն բոցերուն բոլորտիքը կը խոկաս կամ կէս մը կը մըրափես. կունակգ տաք, փութ ուռուցիկ և երեւակայութիւնդ կուսի մը պատկերովը առլի... անշուշտ խաղ և պար ալ կը վաշեւս, երկու տեսակ ռիւշ պէր կը խաղաս, երկուքն ալ իրենց ճգնաժամերն ունին, յոռի. նաև հոգ կամ Բոգ... վերջապէս կը մաղթեմ որ ձմեռը լաւ որտեք քեզ մատակարարէ, ձիւնի վրայ քալող կամ թռչող յիշէ քոնքը, որոնց ճառագայթ մ'է յարած... որոնք սակայն չեն հալիր, այլ կը հալեն... Թօշիլ գիտեն անոնք գերբնական վայրկեանի մը վառ նայուածքի մը մէջ... սակայն մէկգի թողունք քիչ մը այս սէրը և տարիը նայինք... կը բանաս խորհրդաւոր արկղը, փայլուն մետաղներ, կը ժպտին. երկու ժպտ կայ առջիդ. ո՞րը կ'ընտրես... կոյս և ոսկի... գիտեմ, այս վայրկեանիս ընտրեցիր... վերջապէս չաղփաղփութիւնը ըսել կ'ուզեմ, բարեկամ:

Ընտանիքդ լաւ վիճակի մէջ է, քոյրդ և պզտի հրեշտակներդ կլիմայիդ մօտեցան, անշուշտ բաւական գոհ ես:

Եթէ իմ վրայօքս ալ տեղեկութիւն կ'ուզես, վիճակս նոյնութիւն է, առանձինն

ըլլալու համար շատ անդամ տունիս մէկ ցուրտ խոցը մեկնած, մոյզ ու սառ մատներով գրիչ կը ճարձատեմ, կը մրտեմ, կը վառիմ, աչերս խոշոր խոշոր կը բանամ, կը մրմռամ, ձեռքս ճակտիս կը տանիմ, անհամբերութեան հառաչ մը կ'արձակեմ, կը խօսեմ, կը ծխեմ... ասոնցմէ արտադրեալն է թատերախաղ... յիշաւ բռնի թատերագիր կամ բանաստեղծ ըլլալ կ'ուզեմ, տենչ մը որ աղքատիկ հիւզի մը անկիւնը՝ քաղցի և ցուրտի սեւ վերմակներուն տակ վերջապէս ակամայ կը մտնի... ինչ որ է, պիտի հանգուրժեմ որչափ որ կ'արեւամ, ստակը չեմ առեր, բայց գրիչը կը սիրեմ, սփոփ մ'է նա ինձ այս անձուկ կացութեանս մէջ, հիմակուան դորձատէրերը կով կ'ուզեն գործածելու և աշխատելու, ոչ թէ մարդ. ես այս սկզբունքը ճակտիս վրայ գրեցի — համբերել և յուսալ — այս սկզբունքը քեզ ալ կը յարմարի... տեսնե՛նք, քանի մը թատերախաղեր ունիմ, կընամ ստակով կամ ծափով փոխանակել... աս ալ ըսեմ, ամիսի մը չափ մինչեւ անգամ խոնարհեցայ *Դերասաններու ընկերութեան* ընտանիքիս կարօտը լեցնելու համար, բայց քեզ ծանօթ անձի մը հին արկածներէն մնացած ատելութեան կրակովը բորբոքած՝ նախատինքներուն չկրնալով հանգուրժել, աղտոտ անկողինս թատրոնէն տուն փոխադրեցի. այս ալ ըրի ապրելու համար, անգործութիւնը թոթափելու համար, այդ անձին ինծի ըրած. նախատանայ պատմութիւնը սոսկալի է և ես աւետարանական հեղութեամբ ներեցի... հիմա այդ անցքը հոս պատմելը անպատեհ է... դու բաժանման կէտերուդ շատ կրկնեցիր որ գործ գտնեմ, եղբայր, սա ճակատագրիս գէմ կը խօսիս... լռենք... աչերս կը լինան... վերջացնենք... մատներս կը մըսին, երթամ վարը քիչ մը տաքնալու... (1)

Կը խնդրեմ որ դու ալ քու վրայօքդ մասնաւոր տեղեկութիւններ պարունակող նամակ չղանաս բարեկամէդ... հոս ցուրտը սկսեց, ածուխի կողովներով պզտիկ

մերկ ու մաած աղջիկներ կ'երթեւեկեն փողոցներու մէջ. յիշաւ Վիկթոր Հիւկոյի պէքէն խլրած է այս տեսարանը. հարուստները ջահերով կ'ըջօսնուն, աղքատները առկայծ հոգէ կանթեղով մը կը մսին... ասոնք ալ սքօղենք, Վարդան — Մարտիկ(2) — Պետրոս — Նոյնութիւն, մեր ճակատագիրները դպրոցի մէջ միացան և տեսնենք ի՞նչ համախմբութիւն մը դայն պիտի լուծէ(3):

Ընտանիքդ սիրով քեզ կ'ողջունէ... նամակդ փութացուր, այսօր այսչափ... կը մսիմ...

Անկեղծ
ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔ

Որբոցներուն մեկմէկ փնջիկ
Պայիկ մ'եկաւ զետեղել.
Դոյնզգոյն են անոր ծաղկունք
Եւ առէջքներն ոսկեմել:

Մանկութեան ջերմ արեւշողով
Բոլոր կողմեր կը բացուին,
Միոյն՝ թերթերն են թէեւ սիրոյ,
Միւսոյն՝ փառաց մրտենին:

Հոս՝ կը յորդեն ցնորքներու
Ակնախրտիդ ցուրմներ.
Անդին՝ յուսոյ երկնակապոյտ
Կը ծըլին նուրբ ծաղիկներ:

Այդ շողերով կ'եթերանան
Կեանք, եւ խանդոտ պատանին
Երջանկացած՝ երջանկացնել
Կ'երազէ զընաւ իւր չորս պին:

Այլ կը փըչեն մըրիկը. — Կ'իշնան
Աստ անդ տերեւ այդ ծաղկանց.
Քանի՞ մը փուշ կը մնան՝ սրտին
Է՛ն սեւ արեամբ կարմրեցած...:

Թ. ԹԵՐԶԵԱՆ

[1] Դուրեան կ'երթար տաքնալու վարձակալ Աբրահամ աղային սենեակն ուր կրակ կար:

[2] Մարտիկ Պոլիկեան, Բէթիի տնօրէն է այժմ ի Սեբաստիա:

[3] Իր մահը կ'ականարկէ:

ՄԱՆՎՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԽՈՐ ԿՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՇՈՒՆ

Ի

Արքունի ճարտարապետ Սէրվէրեան Յօհաննէս ամիրան Խտալիայէն ճարտարապետ մը բերել տուած էր, Քառէլի անուն, գիտնական անձ մը, որպէս զի երկրաշափութիւն, գծադրութիւն և ճարտարապետութիւն ուսուցանէ իւր որդւոց, ինչպէս նաեւ իւր ձեռքին տակ աշխատող հայ գործապետաց ումանց զաւակներուն:

Օրին մէկն այդ անձին հետ ճեմարան եկաւ, վեր վար պտրտեցան և ամէն բան մանրամասնաբար աչքէ անցուցին: Տնօրէն Յակոբիկ աղա, ուսումնապետ Յօհաննէս պատուելի և իտալացի Պ. Խաչատուր Պարտիզպանեան, որ թարգմանի պաշտօն կը կատարէր, անոնց ընկերանալով ամէն պէտք եղած տեղեկութիւնները տուին: Սինեօր Քառէլի չհաւնեցաւ, ո՛չ չէնքին, ո՛չ ուսմանց ծրագրին, ոչ ներքին կանոններուն: Խնդրուեցաւ իրմէ որ իւր դիտողութիւններն՝ ինչպէս նաև հարկ դատած բարեփոխումները՝ գրով յայտնէ: Հաճեցաւ Սին. Քառէլի և քանի մ'օր յետոյ տեղեկագիր մը տուաւ: Նախ՝ չէնքին մէջ փոփոխութիւններ կ'առաջարկէր. երկրորդ՝ ուսմանց ծրագիրն հիմնովին կը փոխէր՝ կարեւոր ուսումներ աւելցունելով և իննամեայ ընթացքը վեցի իջուցնելով:

Առաջարկեալ բարեփոխութիւնը, առանց զիտողութեան ընդունուեցան: Բայց գործադրութիւնը մեծագումար ծախսոյ կը կարօտէր, մանաւանդ չէնքին մէջ կատարուելիք փոփոխութեանց մասը:

Ճեմարանին հասոյթն էր Երուսաղէմի վանքէն վճարելի տարեկան 120,000 զուրուշ(1). բայց այս գումար հազիւ կրնար ծախսոյ կէսը գոցել. մնացեալն ամիրանները պիտի վճարէին՝ մէկ մէկ տղու ամբողջ

կամ կէս թոշակն ստանձնելով, այն է տարեկան 2000 կամ 1000 զուրուշ: Այս որոշում տրուած էր ընդհանուր ժողովով մը, որ ճեմարանին մէջ գումարեցաւ նոյն տարւոյն ամառը մայիս ամսոյ մէջ, ընդ նախագահութեամբ Յակոբոս Պատրիարքին. և այս առթիւ շքեղ ճաշ մ'ալ տրուեցաւ, որում ներկայ էին Պոլիս զետնուող բարձրաստիճան եկեղեցականք և բոլոր մեծ ու փոքր ամիրայք:

Նշանաւոր և հետեւապէս յոյժ հետաքրքրաշարժ տեսարան մ'էր մեզ համար ներկայութիւնն այնչափ ամիրաներու, որոց անուններն ձրինակեցի յայնժամ ճեմարանին արձանագրութեանց տումարէն, և շատերունը կրնամ յիշել տակաւին:

Մեծ դահլճին ճակատը բազմած էր Յակոբոս Պատրիարք. նորա քով նստած էին կարգաւ՝ նախկին Պատրիարք Կարապետ արքեպիսկոպոս, յաջորդ Պատրիարք Աստուածատուր եպիսկոպոս, Երեմիա եպիսկոպոս, Կիրակոս եպիսկոպոս, Երուսաղէմի փոխանորդ Յօհաննէս վարդապետ (ապա Պատրիարք Երուսաղէմի). ստոյն մէջետոյ կուգային Պոլիս գտնուող նուիրակներն և ծերունի վարդապետներ:

Իսկ դահլճին երկու կողմը նստած էին հետեւեալ ամիրաններն.

Յարութիւն ամիրայ	Երկանեան
Ճանիկ	» Փափաղեան
Մագսուտ	» Սարիմեան
Մկրտիչ	» Արփարեան
Միքայէլ	» Փիլիպեան
Յօհաննէս	» Տատեան
Պօղոս	» »
Յօհաննէս	» Սէրվէրեան
Կարապետ	» Պալեան
Մկրտիչ	» Ճէզայիրլի
Միսաք	» Միսաքեան
Գէորգ	» Երամեան
Յարութիւն	» Նէվրուզեան
Յարութիւն	» Նորատունկեան
Պետրոս	» Քիւրքճիխանլը
Յարութիւն	» Կէլիէլեան
Պազտասար	» Չարապլը
Յօհաննէս	» Աղնաուրեան
Մարտիրոս	» Սաքեան
Պետրոս	» Խորասանճեան

(1) Շէնքին համար ալ 240,000 զուրուշ վճարած էր:

Յարութիւն աղա Թօփհանէլի	
Արղուման	» Արղումանեան
Պօղոս	» Օտեան
Պօղոս	» Աշնանեան
Յօհաննէս	» Եաղըճեան
Յակոբճան	» Մխաքեան
Նիկողոս	» Մխաքեան
Աբրահամ	» Փէշթըմալճեան
Բարունակ	» Բարունակեան
Գէորգ	» Եղիա-Հէլէպիան
Յօհաննէս	» Բինկեանցի
Պաղտատար	» Սիւնկիւճի պաշի
Գէորգ	» Փափաղեան
Մկրտիչ	» Մամճեան

Պալխափանցի, Սուլուխանցի և այլք որոց անունները չեմ յիշեր:

Տնօրէն Յակոբիկ աղա երկաշն տեղեկագիր-ճառ մը կարդաց. մեզնէ ոմանք ալ ստանաւոր ուղերձներ կարդացին, զորս Պ. Մխաքեան յօրինած էր:

Պոլսոյ զլխաւոր վարժապետներն որ հոն ներկայ էին, ամիրաներէն ոմանց հրաւիրանօք, հարցումներ ըրին մեզ քերականութեան վրայ, բայց չյաջողեցան, ձեմարանին նոր քերականութիւնն անձանօթ լինելով իրենց, դերերը փոխուեցան. փոխանակ անոնք զմեզ քննելու, մեր մէջէն յանգստագոյնները զանոնք քննելու ելան, և այնպէս ըրին որ խեղճ վարժապետները չկրցին իրենց դատը պաշտպանել և մերայնոց ճամարտակութիւնն յաղթանակեց: Սակաւաթիւ հասկցողք լուր կեցան, իսկ չհասկցող ստուար մեծամասնութիւնն սքանչացան ձեմարանի աշակերտաց կանխահաս հմտութեան վրայ: Հետեւեալ օրն ամէն կողմ լուր տարածուած էր թէ սալուծի պէս վարժապետներ չէին կրցած պատասխանել իրենց սրունքին չափ տղայոց, և խայտառակաբար յաղթուէր էին անոնցմէ: Այս յաջողութիւն բարենշան առհաւատչեայ մը համարուեցաւ ձեմարանի փայլուն ապագային:

Ամիրաները սիրալոթար խոստացան իրենց ձեռնառութիւնը, թռչակներուն վճարման խնդիրն ապահովապէս լուծուած համարուեցաւ: Աստի քաջալերուած Սէրվէրեան Յօհաննէս ամիրան, Սինեօր Բա-

ռէլիի առաջարկած բարեփոխումներն ամբողջովին գործադրելու ձեռնարկեց՝ պէտք եղած ծախքն իւր կողմէ մատակարարելով⁽²⁾:

ձեմարանի չէնքին մէջ կատարուելիք փոփոխութիւններն էին զլխաւորապէս, տղայոց նշարան եղած 25 սենեակներն, որք չէնքին երկրորդ և երրորդ յարկերուն փողոցի վրայ նալող մասն ամբողջապէս գրաւած էին, երկու սինազարդ երկայն սրահներու վերածել, որք թէ ուսումնասրահի և թէ՛ միանգամայն նշարանի պաշտօն պիտի կատարէին: Մէն մի սղու համար գրասեղան մ'ը մահճակալաւոր անկողին մը կարգաւ պիտի շարուէին սրահին երկու կողմն աշն կերպով որ աղջկայք իրենց դէմի պատուհաններ, միայն կրնային տեսնել:

Շինութիւնք նոյեմբեր ամսոյ մէջ սկըսան. մինչեւ տարեգլխու պիտի աւարտէին և ուսումնասրահները կահաւորուէին: Միանգամայն տղայոց համար միօրինակ ըզգեստ կը պատրաստուէր:

1840ի տարեգլխուն քանի մ'օր մնալով տաանօրեայ արձակուրդ տրուեցաւ Պոլսեցի աշակերտաց: Անցան տօնական օրերն, և երբ կը պատրաստուէի ձեմա-

² Սէրվէրեան Յօհաննէս ամիրայ, որոյ անունը դժբաղդաբար մոռացուեցան մատնուած է, ազգային բարեբարաց զասուն մէջ նշանաւոր տեղ մը բռնելու անփափակ իրաւունքն ունի: ձեմարանին հիմնարկման սկզբնապատճառ, թէ՛ շինութեանն եւ թէ՛ մատակարարման համար մեծամեծ զոհողութիւններ ընելէ զատ, ջանք եւ ծախք չէր խնայած նաեւ զանազան շահաւէտ արուեստներ ծագկեցունելու մեր ազգին մէջ, մասնաւորապէս ճարտարապետութիւն, հիւսնութիւն, ատաղձագործութիւն, քանդակագործութիւն, նկարչութիւն, որք յունաց մասնագիտութիւնն էին: Իւր եւանդուն ուսումնասիրութեան վրայ զաղափար մը տալով համարժեքաւոր կը համարիմ յիշել թէ զոտուն զափուի ատաղձավաճառաց շո կային մէջ, ուր իւր հայրն ու եղբայրն աւաջին եւ ամենէն ընդարձակ տեղը գրաւած էին, յատկապէս վարժոց մը սահմանած եւ ուսուցիչներ կարգած էր իւր ծախքով, որպէս զի ատաղձավաճառաց աշակերտներն, որք ընդհանրապէս կեսաբացի պատանիներ էին, երթային հոն ամէն օր քանիմը ժամ աշխատէին հայերէն եւ թուրքերէն ընթերցում, զիր եւ հաշիւ ուսանելու:

րան վերադառնալ, Պ. Մխարեան մեր տունն եկաւ և յայտնեց հօրս և ինձ թէ ինքն և Պ. Պարտիզպանեան չկընալով ուսմանց նոր ծրագրին վրայ համաձայնիլ տնօրէնութեան հետ, հրաժարական տուած էին, թէ Պ. Քառէլի առաջարկած օգտակար բարեփոխումները մեծաւ մասամբ ի բաց թողուեր էին էօթէն Պօռէի ներկայած հակառաջարկութեանց զօրութեամբ։ Թէ անհնար էր դուհացուցիչ արդիւնք մ'ապաստել ձեմարանէն՝ ցորչափ էօթէն Պօռէի ճիգվիթական ազդեցութիւնը տիրէր տնօրէնութեան վրայ։ Թէ թոշակաց վճարումն ալ արդէն դժուարութեանց կը հանդիպէր, որով ձեմարանին ապագան նիւթապէս ալ վտանգի մէջ էր, և այլն և այլն։

Այս ձախող լուրերուն վրայ՝ վհատելով հրաժարեցայ ձեմարան վերադառնալու դիտաւորութենէս։ Քանի մ'օր յետոյ իմացանք թէ հայերէնի դասատու կարգուեր էր Մալէզեան Յովսէփ վարժապետ։ Իսկ թուաբանութեան՝ ինչպէս նաեւ աշխարհագրութեան դասատուութիւնը Չամուրճեան Յօհաննէս պատուելին ստանձնած էր։ միանգամայն գեղեցկազրութեան ուսուցիչ մը բերուած էր։ կառավարիչ Տիրացու Յարութիւնն ալ ճանբուելով տեղն ուրիշ կառավարիչ մը դրուած էր։

Նոյն տարին՝ այսպէս շարունակեց ձեմարանը։ բայց միւս կողմէ կ'իմանայինք թէ նիւթական դժուարութիւնք օր քան զօր կ'աւելնային։ թոշակաց հաւաքման գործը դժուարութեանց առիթ լինելով՝ վճարմունք մեծաւ մասամբ դադրած էին, վարժապետական դասն իրեն եղած թշնամանաց վրէժը կը լուծէր յոյժ աննպաստ լուրեր տարածելով։ եկեղեցական դասն ալ մասամբ ձայնակից էր անոնց։

1840ին վերջը ձեմարանի նիւթական վիճակն ա'յն աստիճան ծանրացաւ որ շարունակութիւնն անհնարին եղաւ։ Տնօրէնութիւնն՝ ամիրաներուն ձեռնառուութենէն յուսաբեկ, ժողովրդեան դիմել մտաբերեց։ արհեստաւորաց գլխաւորները ձեմարան հրաւիրելով՝ իրաց վիճակը պարզեց անոնց առջեւ ա'յն աստիճան սրտա-յոյզ կերպիւ, որ միտքերը գրգռելէ և ա-

հաղին կռիւ մը յարուցանելէ ուրիշ արդիւնք չունեցաւ։ էսնաֆներու և սարաֆներու կռիւն, որ չորս տարի տեւեց և երեք Պատրիարք տապալեց։

Այսպէս կործանեցաւ առաջին ձեմարանն, որ այնչափ եռանդուն իղձերով, քաղցր յոյսերով և մեծամեծ զոհողութեամբ հիմնուած էր(3)։

Կ. Ս. ԻԿԹԻԻՃԵԱՆ

ՄԵՐ ԳԵՐԵՉՄԱՆՈՅԸ

ՄՈՆԿՈՒԹԵԱՆ ՅԵՇԱՍՏԱԿՆԵՐ

Քաղաքները փախչելով՝ գէպի գերեզմանոց կը մօտին, իսկ գիւղերն արդէն իրենց քով ունին գերեզմանոցը։ Քաղաքացիք արհաւիրք կը նային գերեզմանէն ներս, իսկ գիւղին մէջ ոչ ոք ահաբեկ աչքով կը դիտէ պա՛ղ քարերը, փայտէ խաչերը, որոնք ցիր ու ցան սփռուած են մահու դաշտին վրայ։ Նրկիւղը՝ երկիւղածութիւն է հոն, սարսուռը՝ հաւատք և սարսափը՝ պաշտամունք։

Մեր Գերեզմանոցը, Պուէտ Մխարեանի «անձածկոյթ եկեղեցին», մեր տանը առջեւ կ'իյնար։ քանի մը արտավար հող՝ զոր մահու քարեր կը սրբապործեն։ Ամէն բան անփառունակ է հոն։ ոչ երկաթի վանդակապատ, ոչ ծանրագին քարեր եւ ոչ ա՛յլ շքեղ պերճանք կը վերաւորեն հաւատացող աչքեր։ Իր զարդը, միակն ատ սրբարանին մէջ, Ալօթատուն մըն է, որ իբրեւ պահապան ոգի կձկտած է հոն պարտիզպանի մը խրճիթին պէս։ Գաբէլ-խաչ աս է իր անունը։

Ատ սրբարանին մէջ ոչ քահանայի ձայն լսուած է օր մը և ոչ անոր բուրուաւը

(3) Ատ կ'աւարտի իմ մանկութեան հետ նաեւ յիշատակներս առաջին մասն, որ, ինչպէս տեսն ընթերցողք, իմ դպրոցական կենաց պատկերը կը կազմէր, որոյ մէջ իմ գլխաւոր նըպատակն եղած է մեր հին կրթական վիճակին վրայ զաղափար մը տալ մեր արդի սերնդին եւ մասնաւորապէս կրթական խնդրով զբաղող հրըստպարակազրաց եւ պաշտօնական մարմնոց։

ճօճած, ժամկոչ չունի, պահապան չունի, իր դուռը բաց է օրուան ամէն ժամուն: Իր ազօթողները մեր թաղին ծերերն ու պառաւներն են. անոնց եկեղեցին էր կեանքի վերջամուտին: Պատկեր ալ չկայ անոր մէջ. ոչ փայտէ կամ երկաթի խաչեր, ամէն պաշտամունք, ամէն ազօթք, ամէն ջերմեռանդութիւն պէտք էր թափել քարի մը առջեւ, սեւ, խոշոր քարի մը, որ սրբարանին մէջ կը ցցուի պատկառելի: Թուական չունի, բայց գիւրին է հաւատալ որ քրիստոնէութեան ժամանակակից ըլլայ կարգ մը քարերու նման որոնք զիւրին բոլորովքը կը շարունակ իբրեւ նշաններ խաչի՝ խաչանիշ պատկերներով: Իր վրայ վառուած մոմերու ծուխն ու ձանձախարիթը կը մնան անջինջ, և որբիչներ կուգան կը զիջուին իրարու վրայ: Ոչ ոք կը համարձակի ձեռք դպցնել ծուխի ատ խաւերուն, ուր ծերուկ պապն ու ալեւոր թառնիկը կուգան ու կը համբուրեն զիրար ազօթքով՝ ատ սրբանուէր վէմին սրբազան երեսին վրայ:

Ամէն չարաթ իրիկուն, արեւի մուրքէն ետքը, հոն կը գտնէի մեր թաղին ծերուկները, ամենքն ալ կարգով շարուած Գաբէլ-Խաչին առջեւ, մոմերու ազօտ ճաճանջներուն տակ: Չայն ձուն չես լսեր. անշուշտ նստած են յափշտակութեան մէջ, անշուշտ կ'ազօթեն ու անշուշտ կը մեկնին սրբարանէն՝ գոհացուցած աստուածութիւն մը, որ, ինչչափ կարելի էր դատել, շատ բազմապահանջ էր երեւեր, և, առանց քահանայի, վարդապետի ու անուանի եպիսկոպոսի միջնորդութեանը, կը լսէր զիբերք, կը հաճէր իրենց անձայն ազօթքներուն, կ'ընդունէր իրենց խօսակն ալ, մոմն ալ ու արցունքներն ալ:

Գիշերը, — եթէ ձէթն սպառած չըլլար, — սրբարանին մէկ անկիւնը կը պլպլար կանթեղ մը, և հեռուէն կը տեսնուէր մութին մէջ կրակէ խոշոր կայծ մը: Կը յիշեմ թէ ինչպէս խաչ կը հանէինք ատ հեռաւոր ճաճանջին դէմ, որ մեռելներու սրբատանը մէջ արթուն հոգին էր և մեր ծերուկներու գեղջուկ հաւատքը, ջինջ, պարզ, անբիծ, գերեզմանոցի խաւարին

մէջ: Աչքդ քիչ մը դէն խոտորելով կը տեսնէիր ցիր ու ցան կայծեր գետնին վրայ զոր թեթեւ քամին կ'սպառէ ճանկընթելով: Բարեպաշտիկ ձեռքեր բերած են ատոնք ու սիրական գերեզմաններ խնկարկելէ ետքը՝ թափած հոն իբրեւ սրբազան կայծեր՝ զոր մեհեաններու մէջ անչէջ կը տածէին հիները: Ատ կանթեղն ու խնկարեր կիներու կայծերը, ծերերու հաւատքն ու հսկայ Խաչ Կաթն՝ կենդանութիւնն էին մեր գերեզմանոցին:

Ատ վայրն եղաւ մեր նախասրահը ուր արցունքի դասերը կը տրուին: Հոն տեսանք առաջին անգամ թէ ինչպէս մարդիկ՝ մարդը ճերմակ պատանքով կ'իջեցնեն հողը: Հոն տեսանք թէ ինչպէս մարդիկ՝ մարդէն կը զատուին արցունքով ու լացով: Հոն առաջին անգամ, գրգռած որբիչներու օրինակէն, հող լեցուցինք մեզ տարեկիցներու վրայ, և արցունքն զգացինք թաց թաց երբ տէրպապաները պղզտիկ մը առած որրանէն կը տանէին՝ բունին մէջ զարնուած թռչնիկի մը պէս:

Գերեզմանոցը, իր ստուերախառն օրերուն մէջ, ամբողջ տարին ճերմակ օր մը ունի միայն. — Զատիկ երկուշաբթին: Ամէն տուն ու թաղ՝ իր մեռելները օրհնել կուտայ ատ օրը. և մեր քահանաներն, անձանձրոթ, Հոգեհանգստեանը կը մրմնջեն տխրական աւազներով: Հասարակաց սեղան կը տրուի, կերակուրները բերուած են ամէն տունէ, և մեռելի հացը կուտեն ամենքն ալ ինքնակոչ քնքուշ կանաչին վրայ ծալապատիկ շարուած:

Զգիտեմ ինչ հրաօլուրանքով կը ժողվէին մանկիկներն ատ մեռելական աւազները, և մեր տէրպապաներուն կը հետեւէինք լսիկ չայլ առ քայլ ու քարէ քար: Հոն են ծերուկները, իրենց յանձնուած է ներկայ գ նուիլ ու անձամբ օրհնել տալ իրենց տան մեռելները: Ամէն ծերուկ՝ սիրականներու պատմութիւն մը ունի ատ քարերուն տակ. — հարս ունի, զաւակ ունի, թոռնիկ ունի, ամենքն ալ երիտաւարդ կեանքեր, որոնք առտուն խամրած ծաղկի մը թերթերուն պէս թափած են մահաշունչ խորշակին տակ: Եւ արցունքն է

որ յանկարծ թոմոսած աչքերու վրայ կ'երևի իրրեւ պղպղակ:

Ծիւղ այսպէս Զատիկի Դեւերցն էր, և իրիկուան մօտ՝ օրհնութեան կարգն եկած էր մեր տան մեռելներուն: Հոն էր ծերուկ պապս, կծկտած ու դողդոջուն մեր քարերուն մէջ: Ոչ թուական կայ անոնց վրայ և ոչ անուններ արձանագրուած. կենդանի պատմութիւն պապս ինքն էր, և բերանացի կ'աւանդէր մեզի՝ զանոնք անկորուստ պահելու: Եւ ատոնց մէջ ցոյց տուաւ իր քարը՝ դրուած սիրական էակի մը քով՝ որով կենակից պիտի ըլլար մեռելութենէ ետքը: Բոլորովին նորութիւն էր աս, և այսօր կը զարմացնէ զիս մահու հետ ա'տ ընտելութիւնը՝ հեղձն իմաստունի մը բարոյական առաքինութեամբը: Մէյ մըն ալ տեսանք որ մօտենալով քահանային՝ կ'ըսէր. «Տէ՛ր հայր, աս քարն ալ օրհնէ: — Ի՞նչպէս կ'ըլլայ, օ՛րհնած: — Է՛հ, ի՞նչ գիտես, բարիք մը կը ծնի, և դալ տարի իս ալ կ'օրհնես քարիս տակ: Հասունցեր եմ, Տէ՛ր հայր, հասունցեր»: Կէս մը լալով արտասանուած աս ըզձական խօսքերէն ետքը՝ դողդոջ ձեռքերը դրաւ սիրական քարի մը վրայ, և ալեւորիկ զլուխն ալ ծռելով դէպի հողը, իրրեւ թէ մեռելին ականջէն վար, «Իս ալ տարէք, իս ալ, օրն իրիկուն եղաւ»...: Եւ ատ «օրն իրիկուն եղաւ» ձայնը տակաւին նոյնութեամբ կը հնչէ ականջներուն մէջ նոյնութեամբ մտքիս առջեւ է սիրական գերեզմանին վրայ տարածուած մարգելային դողդոջ Պատկեր մը՝ իրիկուան հողմածփիկ ստուերներուն մէջ:

Ատ Գերեզմանոցը: Եթէ կամքս դօրէր ճակատագրին, որ իր տնօրէն աջը կը դնէ մարդոց սկիզբին ու վախճանին վրայ, մեր Գերեզմանոցէն զատ ուրիշ տեղ չէի ընտրեր, Գաբրէլ-Պաշը կ'ուզէի մեր զբոստան վերել, չաբաթ իրիկունները մեր տունէն բերուած խնկահոտ կայծերը մեր քով ինկած, և հօրենական տունէ ցիւր ու ցան կեանքերը՝ մեր պապու գերեզմանին շուրջը ամփոփուած:

ՀՐԱՆԴ

ՕՏԵԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԵՄԵՐԸ

ՇԱՐՈՒՆԱԿՅԻՌԻՆՆ ՕՐԱԳՐԻՆ

Գ

7 յունիս 1865, Ռուսնուք

Այսօր չորս օր է որ քիչ մը սթափեցայ զգաստացայ... և ինչո՞ւ աչքան սաստիկ յուզուեցայ... այս քսան ամբ էն որ սովորած էի ես վիշաք ու տառապանք կրելու և մեղամաղձիկ լինութիւնս՝ արգասիք այնքան վաղահաս վշտակրութեան, կ'ըմբոստանար ամենայն սրտայոյզ ազդեցութեանց դէմ... և ուղեցիյալից էլ ճակատագրին և ամօթահար պարտեալ ինկայ իր ձեռքէն... ա՛հ, հայր իմ, այս աշխարհիս վրա իմ միակ սէրս ու միակ պաշտամունքս դո՛ւն պիտի ըլլայի և ի մահուկ տիոցս այնպէս եղած էր և ինչո՞ւ իմ սիրտս դեռ ուղեց ապրիլ քու մահուընէդ ղկնի... քու սէրդ ինծի ամենայն սիրոյ պիտի փոխանակէր և սրտիս անհուն պարապը լեցնելու համար քու խանդավառիքդ պարգեւած էր ինծի Աստուած... վա՛ղ ուրեմն յափըշտակեցաւ և այն... և մնացի որը և պանդուխտ՝ աննպատակ կեանքիս ծանրութեանը տակ հեծելով... և այս օտարտի ափանց վրայ նետված փոթորկէն, անյուսութեան ու անհուն ծանձրութեան տարիներու մէջ պիտի քաւեմ հոս իմ բոլոր պատրանքներս որոնցմով ես ղինքս խորել ուղեցի և որոնք սթիթարութեան շուք մը՝ ձգեցին իմ խնչտանգեալ կեանքիս վրա... և հոս կեանքիս ու ճակատագրիս խնկութեանը բոլոր ահեղութեանը առջեւ՝ անխափ աչօք՝ մերկ ու անղէն՝ դէմ աս գէմ մնացի...:

9 յունիս

Սրտաթափ և ուժաթափ անկողին ինկեր էի... իմ խորհրդոցս, մտածութեանցս, հեծութեանցս ու արտասանութեանս միակ խորհրդականն ու աւանդատունը... հոն՝ երբ պառկիմ, մեկուսացած յաշխարհէ, հեռացած ամենայնէ, միտքս հոնից կը ճախրէ ու մօտ կ'երթայ

սիրելագոյն էակացս և մէկիկ մէկիկ դիմացս կուգան կը շարվին այն ամեն տեսարանները, ամենափոքրիկ զիրքերը, խօսքերը, նշանացիները որոնք չունին բացատրութիւն որ և է խօսքի մէջ, վերջապէս ինչ որ խորին կամ ազդու տպաւորութիւն մ'ըրած է վրաս . և հուսկ ուրեմն ամենէն ալ աչքս մէկ դի դարձնելով և ամեն բանի ծայրը ունայնութիւն միայն տեսնելով, աչքս կը փակեմ և անհողի ու անընդմիջեալ քունով մը կը քնանամ . . . քուն մահուան չափ . . . երազ չեմ տեսնիր, զի ամենայն որ յիս՝ ոչընչացած է ի սրտիս . . . :

Եւ արթնացայ պատուհանիս ապակիներուն դէմ շառաչող փոթորիկին ու կոտորտօղ կարկուտին զղրղունովը — ծովն ու ամպերն իրար են խառնուեր, կայծակն օդը կը պատուէ ու հովը կարծես թէ պիտի փլցնէ զաշխարհ . . . : Եղբւկ Սեւ ծովին վրա գտնուող ճամբորդներուն — ողորմէ՛ անոնց, Աստուած իմ, մէջերնուն շատը սիրոյ կայծ մը ունին սիրտերնուն մէջ, անուշ պատկեր մը ունին թերեւս երեւակայութիւններնուն առջեւ, իղձ մը ունին, հառաչանք մը, յուսոյ նշոյլ մը կամ բաւական զօրաւոր կը զգան ինքզինքնին ակար կամ վըշտաբեկ էակ մը միտքաբերու և զօրացնելու համար . . . մեղք է կորզել զանոնք սիրոյ գրկէն, կամ իրենց, ո՛հ, այնքան գեղեցիկ ակնկալութիւններէն և ի պատրանացն իսկ յոր դեռ կրնան վայելել . . . :

13 յունիս

Երեք փոթորիկ եղաւ անկէ ի վեր — կարծես թէ բնութիւնը վրդովեր է և ո՛ւր մնաց իր այնքան հանդարտութիւնը — բնութեան այս վիճակին մէջ բան մը կը զգամ որ իմ վիճակիս կը պատասխանէ . . . սեւագէտ ամպերը մերթ կը զիզվին կը կուտակին երկրնքին երեսը, կը բարձրանան գունդ կը կազմեն և մահուան սեւ ըստ ուեր մը կը տարածեն Դանուբին ջուրերուն ու լեռանց զլուխներուն վրա, մերթ հալածական մղուած հովէն՝ տեղի կուտան կրակոտ արեւին կամ լուսնին մարած լուսին և կ'երթան այլուր գոռալ ու ճայթիլ մարդոց զխին . . . : Եւ սառնակա՛ն հով մը

զժսխոց կոկորդէն կարծես թէ կը փչէ և գիշերվան մութին մէջ սուրալով ի սոյլ դառնաչունչ՝ կարծես թէ գուժաբեր ձայն մըն է որ հեռո՛ւ տեղերէ կուգայ իմ միայնութեանս ու ամայութեանս մէջ սեւ նախազգացմամբք լեցնելու իմ սիրտս ու հոգիս . . . :

Եղբւկ ինծի, այս աղետալի ձայնը ուրիշ անգամ մըն ալ հարաւ իմ ականջիս ու սրտիս: Երեք օր և երեք գիշեր փչեց անիծաբեր հովը և քանի որ անի կը փռչէր սուր ու երկարատեւ հառաչանքներով, ծառերուն գեղնցած տերեւները գետին կ'իյնային և բնութիւնն իր ամեն զարդերէն մերկանալով համաշխարհական սուգ մը կը պատէր երկրիս երեսը — և երեք օր երեք գիշեր՝ կենաց ու մահուան մէջ ծեծկուելով և այնքան վշտաց ու տառապանաց համբերելէն ետքը՝ դառնութեան բառ մը անգամ չը հանելով բերնէն ու բոլոր իր սիրելեացը վերջին հրաժարականն ու օրհնութիւնը տալով այրեացաւեր կնօջը, անմխիթա՛ր զաւակացը, թոռանցը և թոռանց զաւկներուն կոծերուն ու վայնասունին մէջ՝ իր սուրբ հոգին կ'աւանդէր իմ սիրելի՛ հայրս . . . :

Առաքիւնութիւն, իրաւցնէ՛ լոկ անուն մըն ե՛ս արդեօք . . . բոլոր կեանքիս մէջ քեզի ունեցած բուռն հաւատքս մի միայն զօրավիզն եղաւ իմ դողդոջուն քայլերուս և լքեալ ու զրկեալ յամենայնէ՛ քու պատկերդ միայն իմ գեղեւուն սիրտս կը զօրացնէր . . . ու տեսայ քեզ ալ խաղալիկ եղած մարդոց ձեռքը և համոզուեցայ, ամսո՛ս, թէ յաղթանակը քեզի պահուած չէ այս աշխարհիս վրա . . . արդեօք լոկ մարդկային բնութեան մէկ տկարութիւնը չե՞ս միթէ կամ նոյն իսկ սրտին շահատակութիւնը՝ նոյն և նման մարմնոյ շահատակութեանց զորոնք ճօճելով ըմբիշը կամ զինականը՝ կը փառաւորուի ու կը ճոխանայ ինքնիրեն ու մարդոց առջեւ . . . ո՞ գիտէ . . . և մարդս ուրեմն արարչութեան մէկ հեղնութիւնն է և իր ամենէն գեղեցիկ զգացումները՝ ամենէն կոշտ զգայնութեանց պտուղը . . . :

Չէ՛. ամենայն ինչ ներդաշնակութիւն է տիեզերաց մէջ և ինչպէս նիւթական

կարգին մէջ՝ այնպէ՛ս ալ բարոյական կարգին մէջ կա՛յ ներդաշնակութիւն և բարոյական կարգին մէջ ներդաշնակութիւնը՝ արդարութիւնն է. . .

17 յուլիս

Ամիս մը և աւելի ժամանակ անցաւ անկէ ի վեր—բայր ցաւերս թմրեցան վերաս . ոչ եւս յուզեալ ալեծուսի վիճակի մը մէջ կը գտնուիմ. հանդարտութիւն չէ, այլ ընդհանուր ապշութիւն մը տիրած է զգացմանցս ու իմացականութեանս: Նման այն ճամբորդին՝ որ օրերով ու շաբաթներով ահագին ուրեկոծութեանց մատնուած՝ մէկ կողմէն կը տոչորէ զինքը իր սիրելի երկիրը հասնելու անհամբերութիւնը և միւս կողմէն այնքան սպառնալիքը, ահ ու դողը և մահը որ կարծես թէ չորս կողմէն պատառոտի ալեաց ծոցէն գուրս կը ցրցուեցնէ իր գլուխը. . . և վերջապէս անհուն անյատակ անդունդներուն մէջ բարձրացած մենաւոր ժայռի մը վրա կը նետուի , հոն իր կեանքը կ'ապահովէ , այլ միանգամայն անեղբոյ ուկիտանին վրա այն միակ կէտը զրաւած՝ ուր ոչ եւս պիտի մերձենայ մահկանացու որ, հո՛ն ամենայն յայտնի բաց թողելու ստիպուած, կը տեսնէ որ դատապարտուած է մէյ մ'ալ իր երկիրը չըտեսնելու , մարդո՛ւ երես չը տեսնելու բնաւին , ու յաւիտենական ֆաշէ՛թ-ֆաշէ-մը կ'ուղղէ այն անմերձեանալի հեռավորութենէն, այն ամայի ժայռին վրայէն և այն սոսկալի միայնութենէն ուր մեռնելէն առաջ թաղուած է դեռ կենդանի, իր անձկալի ծննդավայրին և սիրելեացը զորոնք մէյ մ'ալ չը պիտի տեսնէ և այն միասնաբարոյի ալ չը պիտի լսի անոնց և որոնք միշտ յուսով պիտի մնան իր գալստեանը. . . և ուկիտանին ալիքները մռնչելով ահագնազորդ կուգան գոչել ու գոռա՛լ անդադար իր ոտքերուն առջեւ. . . ահա՛ այս է ասկէ ետեւ իմ վիճակս ալ. . . : Ես այն ամայի ժայռին վրա՛ ասկէ ետքը ոչ ալեկոծութենէ կը վախնամ և ոչ բնաւ յայտ կը տածեմ՝ սըրտիս մէջ: Ե.)

Հոս կը դադրի դժբախտաբար իր օրա-

դրութիւնը: Ե- ու ապա երես մը լեցուն կէտեր:

* * *

Ինչպէս վերն ըսի, Օտեանի սիրելի հեղինակներէն մէկն ալ Ալիշանն էր, մանաւանդ իր նուագները: Տունը , ճամբան , պաշտօնատեղին , վերջապէս ամէն տեղ Հայրենին ու Տիրենին իր անբաժան ընկերներն էին : Այս մասին պատմեմ փոքրիկ անէփոսք մը: 1866 հոկտեմբեր 20ին , երբ Կարողոս իշխան (հիմայ Ռուսմանիայի թագաւոր) Պոլսէն կը դառնար, Օտեան հրաւիրուեցաւ Վառնա երթալ՝ մինչեւ Ռուս-ճուք իշխանին ընկերանալու համար: Յատուկ կառախումբ մը իշխանն իր հետեւորդներուն և Օտեանի հետ Վառնայէն կը բերէր : Վալոնին մէջ քանի մը ժամ խօսակցութենէ ետքը, երբ ա՛լ ըսելիքները կը հասնին, Օտեան զրպանէն Տիրենին հանելով կը սկսի կարգալ, անկիւն մը քաշուած : Իշխանը հետաքրքրուելով՝ կը հարցնէ թէ ի՞նչ է կարդացածը և Օտեան գրքին գովեստն ընկէ ետքը կը սկսի թարգմանել տաղերէն մէկ քանին ու իշխանը հիացումով մտիկ կ'ընէ մեր հայ բերթողին նուագներն ու ի յիշատակ այդ հաճոյալի ուղեկցութեան Պուքրէշ հասնելով փառաւոր ոսկեայ ժամացոյց մը նուէր կուտայ Օտեանի՝ իր լուսանկար պատկերին հետ: Իշխանը այնքան համակրած էր իր ուղեկցին որ յաճախ կը թղթակցէր հետը Ռուսճուք գանուած ժամանակ :

Օտեան Պոլիս վերադարձաւ վերջնականապէս 1867 օգոստոս 3ին :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

ՄԵՐ ՊԱՏԿԵՐԸ

ՅԲԱՆՍՈՒՍ ԳՕԲՈՂ:

Անոնք որ դատաւորելու մղութիւնը ունին, որոնք բաղդատութիւնը կը սիրեն և ամեն բան շարել կ'ուզեն առաջնութեան կարգով, Հիւկօէն ու Լամաութիւնէն անմիջապէս ետքը Գօրբէին տեղ պիտի տան:

Մինչեւ այն բարձունքը՝ ուր կը կենան ժեպեյի տարագիրը ու Սէն-Բուանի մեհակեացը, մինչեւ այն կատարները՝

Ուր թխսեն դիք եւ արծուիք ինչպէս կ'ըսէ Եղիան, չի խոյանար Հասարակարգի քերթողը. այլ մեր տանը երգիքին վրայ թառած թռչունն է. այն՝ որուն դարձողարձիկ ճախրանքին կարելի է աչքով հետեւիլ պատուհանէն և որուն երգին ձայնը՝ մանկութենէ ի վեր օրօրած է զձեզ:

Ասոր համար է որ եթէ Հիւկօին վրայ պիտի սքանչանանք միշտ, Համաթիին ի վրայ պիտի գմայլինք, Գօրբէն ալ պիտի սիրենք:

* * *

Ֆրանսուս Գօրբէ քերթող մըն է ամեն բանէ առաջ ու քերթող մնացած է միշտ. ոչ թէ անոր համար որ գրական ուրիշ սեռերու մէջ ալ իր եղական կարողութիւնը ցոյց տուած չըլլայ, այլ անոր համար որ այսպէս ուղած է ինքը:

«Գրելու հանապազօրեայ ճիգը, որ խմբագրի մը ճակատագիրն է, ատեն չի ձգուեր իրեն մտաւոր հանգստի ու ամփոփումի որ անհրաժեշտ է բանաստեղծի մը,» կը գրէր Գօրբէ իր վերջին թերթօնին մէջ որ միանգամայն իր հրաժարականն էր թատերական քրթիկի պաշտօնէն՝ զոր այնքան փայլով վարեց Փարիզեան օրաթերթի մը մէջ:

Այդ միջոցին Ֆրանսական Ակադեմիոյ անդամ ընտրուած էր. և անկէ ի վեր կը շարունակէ իր զրական վաստակը, չի նմանելով անոնց որոնց համար այս ընտրութիւն ծուլութեան ու անգործութեան վկայականի տեղ կը բռնէ:

* * *

Իբրեւ թատերագիր, Գօրբէ աւելի վիպական գալոցին կը մօտենայ. այն գալոցին որ թատերաբեմին վրայ մեծագոյն ներգործութիւնը կ'ընէ: Իր Անյոբը, որ աւելի խօսակցութիւն մըն է քան թէ դատ թատերական կտոր մը, քիչ մը Մաթիօն Տըլօրը կը յիշեցնէ Հիւկօին: Հո՛ս ալ անձնամատոյց կ'իյն մը կայ, ազնուութեան թռչնով

մը բարձրացող, որ կը խղճայ իրեն համար ցանկութենէ տառապող խեղճ տրուպատուրի մը վրայ և անոր անմեղութեան կը խնայէ: Գաթիօն Վէն շէնը այլանդակ մարմնի մէջ բանտարկուած մեծ հոգիի մը ու մեծ կիրքի մը վերլուծումն է: Սէրվէր Թուէլէն — գլուխ գործոցը — Պէշիկթաշիանի Բոհարը միտք կը ձգէ:

Այս ամենուն մէջ ոճի, ձևի, արուեստի կատարելութիւնը՝ զգացմանց բուռն պայքարով մը մղուած՝ վսեմի կը յանգի միշտ:

Թատերգութեանց մէջ՝ միշտ մեծ կիրքերու, սաստիկ վրդովումներու հետ սիրած է զբաղիլ ինչ որ Հիւկօն թէ՛ իր վէպերուն և թէ՛ իր թատերգութեանց մէջ ըրած է:

* * *

Իր քերթուածոցը մէջ՝ բանաստեղծը իրական կեանքը կ'առնէ. պարզ ու գեղջուկ կեանքը, որ իր սովորական ու անմուռնջ գոյութեանը մէջ՝ այնքան համեստ դիւցազնութիւններ, անբարաւ ցաւեր, անտես արցունքներ կը պարտկէ: Գօրբէ այս ամենը կը տեսնէ և, ինչ որ աւելին է, կ'ըգայ:

Անշուշտ, իր Փարիզցի ու միջակ դասի ընտանեաց զուակ մը ըլլալը՝ նպաստած է իրեն, մօտէն դիտելու ինչ որ անտեսանելի է վեր ի վերոյ դիտողի մը աչքին: Իր նկարագրութիւնները, պատկերները մանաւանդ՝ լուսանկարի ճշգրտութիւնը ու ցոլացումը ունին, պզտիկ տրամութիւնով մը խառնուած լուսանկար՝ որ ամպամած օդով մը առնուած ըլլայ:

Այս քերթուածներուն երկար շարքին մէջ առաջին տեղը կը գրաւեն իր Մաթիօն-Տըլօնը, որոնք սիրուած անձի մը հետ խօսակցութիւն մը կը կազմեն, գլուխ գլխի անցուած ժամերու պատմութիւն, որուն մէջ քերթողը առիթ կը գտնէ ամեն առարկաներու վրայ իր բառը ըսել, իր գլխած ձայնը լսեցնել, իր համեստ իմաստասիրութիւնը ընել, ամբողջ ներդաշնակութիւն ու ամբողջ գորով, ճիշդ ինչ որ Բանաստեղծութիւնը պարտի ըլլալ:

* * *

Յետոյ, իր պզտիկ ոտանաւոր պատմու-

թիւնները յատուկ սեռ մը կը ձեւացնեն գրեթէ, սեռ մը՝ որ իրն է և որուն մէջ հաւասարող չունի բնաւ։ Անշուշտ, եթէ թատերգութիւն անունը չառնէր, առաջինը պիտի ըլլար այս շարքին մէջ որոց մէջ կը փայլին Դաբիւսը, զոր կ'արտասանէր ողբացեալ Ադամեան, Բելլերը, Օրֆօնը և ասոնց նման գոհարներ։

Քօբբէ իբրեւ արձակագիր ոչ նուազ հռչակաւոր է. իր նորավէպներու հատորները, միշտ խանդաղատանքի գանձեր կը պարունակեն, պարզ ու անկեղծութեան շնորհով և իր վերջին հատորը՝ Սառ և Երկաթ, նորէն հաւաքածոյ մըն է պղտիկ պատմութիւններու որոց մէջ երեւցող իր բանաստեղծի խառնուածքը՝ թարմ ու մանկունակ երգի մը ներգործութիւնը կը թողու։

Նախընթաց թուով մը հրատարակեցինք իրմէ երկու քերթուածներ զորս Փանոսեան կըցաւ հայերէնի վերածել, առանց բնագրին հրապոյրը կորսնցնելու։

Թարգմանութիւնները, մանաւանդ ուսանաւոր քերթուածոց համար, կլիմայ փոխած ծագիկներու կը նմանին։ Սովորաբար իրենց փոխադրուած նոր հողին մէջ՝ ոչ առջի գոյնը և ոչ առջի հոտը կրնան պահել։ Փանոսեան այն յաջող պարտիզպանն է որ զգալի ընել չի տար այս տեղափոխումը։

Մասին ներկայ թիւին մէջ Քօբբէէն հրատարակուած քերթուածը՝ դարձեալ աւելորդ կը պարտինք, թէեւ այս քերթուածին գաղափարը՝ «Միամիտ Պատմութիւններ» վերնագրին տակ ընդլայնուած գտանք քանի մը շաբաթ առաջ. ռամիկ բանագողութեան մը կասկածը չունեցանք բնաւ, այլ ըսինք միայն որ թերեւս այդ արձակին տէրը ու Քրանսացի բանաստեղծը զիրար գտած են առանց գիտնալու։ Չէ՞ մի որ,

Les grands esprits se rencontrent.

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ՔԱՒԱՐԱՆ

(PURGATOIRE)

Երազ մը տեսայ. — Մեռած էի ես։

Զայն մ'ըսաւ ինծի. — Հոգիդ ամպարիշտ,

«Որպէս զի քաւէ, տանջի դառնապէս,

«Գընա՛ վերստին ապրէ՛ բազմավիշտ։

«Աշնան, անտառին մէջ դեղնած, տոգոյն,

«Ուր սառ հովն իբրեւ մորալ, կը զարնէ,

«Դու ցնցող'ւկ մ'եղիր հէզ, նոթի, անրոյն...»

— «Ինչ աղէկ, կ'երթամ, կը թռչիմ առ հէն։»

— «Ո՛հ, եղի՛ր ուրեմն այն ծառն առանձին.

«Եւ փոթորկին մէջ բուռն ու վայրենի,

«Տերեւդ հերարծակ զալարին, հնձին...»

— «Լա՛ւ, թերեւս ըլլամ ներա՛ հովանի։»

— «Ուրեմն, ո՛ր լեցուն սիրտ սիրով մարդու,

«Ճամբո՛ն, սայլերէն կոխուած, զարշ ու սին

«Գայլախա՛ղն եղիր, փռչի՛ն եղիր դու...»

— «Ինչ փոյթ, թէ ցմիւ՛ն զիս ոտներ կուսին։»

— «Ինչո՞ք» մըռնչեց ձայն, ու կատաղօրէն

«Երեսիս պռոթկաց անէծք մ'հոգեկէզ.

«Վերստին եղի՛ր մարդ, ապրէ՛ նորէն

«Եւ թող Կոյսն երբեք չը սիրէ՛ ըզրեզ...»

ՅԻՆԱՍՈՒՍ. ԳՕԲԲԷ

Թարգմ. ԱՂԵՔՍ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԲԱՅԱՏՐՈՒԱԾ ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկիրը նախքէ մ'ի՛նչ որոյ կեղեւին վրայ կեանքի դառնութիւնը կայ, և անէացման անուշութիւնը՝ կեղեւին տակ։

Կեանքը համբարաւելան մ'ի՛նչ, զոր — աշխարհային ճամբարգուծեանց հակառակ — կարելի եղածին չափ ուշ վերջացնել կ'ուզեն մարդիկ։

Այս ճամբարգուծիւնը զբոսապտոյտ մ'ի՛նչ երջանիկներուն համար, և կալանաւոր ուղեւորութիւն՝ զժբաղաներուն։

Աղջիկը Կիւնի կը նմանցնեն և կինը Ժարի. տարբերութիւն մը կայ սակայն.

մինչ կոկոնին արժեքը կ'աւելնայ վարդ ըլլալով, պարագայն միեւնոյնը չէ աղջկան համար, առանց ամուսնութեան նուիրագործմանը:

Ուրիշ տարբերութիւն մը. մինչ պարտիզպանը ամեն խնամք կը վստահէ որ կոկոնը ծլի և վարդ ըլլայ, ո՛չ մէկ ջանք չի զլացուիր աղջիկը կոկոն ծախելու համար և ոչ վարդ:

Ամուսնութիւնը շուրջէ մը կը նմանցընեն. արդեօք անո՞ր համար որ այր և կին միասին կը կրեն զայն, զոյգ մը կալանաւորներու պէս:

Այս չլթայն յաճախ ձգուած է... էրկանը գրպանէն դէպ ի կնկանը ձեռքը:

Խօսիլը արժէ է փաստաբանին բերնին մէջ, և լռելը արժէ՝ դատաւորին խղճին համար. պարագայներ որոնց հակառակն ալ ճշմարիտ է երբեմն:

Կինը փոփոխութիւն է և ալը անհասարակ. պատճառն այս է որ իրենց միութիւնը չլթայով մը ամրապնդելու պէտքը զգացուած է:

Յաճախ կը խօսուի խղճարանի դատաւորին վրայ. խղճի դատարանին մէջ, արդարութիւնը՝ ընդհանուր և ետը՝ մասնաւոր դատախազի դերը կը կատարեն. սակայն մինչ ընդհանուր դատախազը միշտ բացակայ է, մասնաւորը ներկայ է ամեն դատի և բարձրագոյն լսել կուտայ իւր պահանջները:

Սիրոյ չքովը աւելի եւս կ'արժարժի, կը բոլբոլի, անտարբերութեան ստույգին հանդէպ:

Փորձառութեան քովը անփորձութեան ձախորդութիւններէն բովուած է:

Այն բանը զոր մենք կենաց պայտք կը կոչենք, ունայնամտութեան և ետախրութեան պայքարն է շատ անգամ, եթէ

մարդ կեանքի պարագայները նկատէր իբր անցաւոր վիճակի մը այլ և այլ երեւոյթները, կեանքը՝ զոր ակնթիւն ծովը մը կը նմանցնեն, հանդարտ լճի մը անշարժ մակարդակին երեւոյթը պիտի առնէր:

Փոխանակ ըսելու՝ «համբերութիւնը կենս է», աւելի ճիշդ չէ՞ ըսել թէ՝ կեանքը անհուն համբերութիւն մ'է:

Յուսոյ շշուշները կենաց կանթեղին ցուցումներն են՝ ապագային միութեանը մէջ:

Բամբաստանքը քան ասնկին անհունս կրկնեալ մէկ քանակականն է շատ անգամ:

Մարդկային մարմինը հիշեալ մ'է, զոր մենք ամեն ջանք կ'ընենք աւելու համար, եթէ չյաջողինք բժշկութիւնը կ'ստանանք աւելումը կատարելագործելու պաշտօնը:

Վասն Բացադրութեան
ՏԻՐԱՆ ՔԵԼԷԿԵԱՆ

ՃԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Փարիզէն քաջուած հեռագիր մը ծանուց տիկին Եպրու Քարաքէհեայի մահը: Հանգուցեալ տիկինը, որ մայրն էր Վսեմ. Աբրահամ փաշայի և էրամ պէյի, երկար տարիներէ ի վեր Փարիզ կը բնակէր իր ամուսնին Գէորգ պէյի և իր աղջկան՝ Օր. Զարուհի երամեանի հետ: Յանձին այս պատուական կնոջ՝ բարերարուհի մը կը պակսի մեր մէջէն: Վասն զի ոչ միայն իր բարեկրթութեամբ, կենցաղագիտութեամբ և բարեպաշտութեամբ կը փայլէր, այլ և իր ըրած մեծ բարիքներովը: 1861ին ինք կազմակերպած է Տիկնանց խնամակալութիւնն Ազգ. Հիւանդանոցի բարենորոգման և պատուաբեալներու խնամածութեան համար: Իր խոր ծերութեան մէջ իսկ մեծապէս կը շահագրգռուէր ազգային ամեն բարեգործութեան:

—Երուսաղեմէն կը հաղորդեն Աբե-Էլ-Թիթէ Երուսաղեմի Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան իր անձնական տը-կարութիւնը դարմանելու համար մտադիր է մայրաքաղաքս գալու :

—Պրուսայի առաջնորդ Տ. Բարթուղի-մէոս Սրբազան, նկատելով որ իր առող-ջական վիճակ չի ներեր իրեն այսուհետեւ զբաղիլ թեմական գործերով, վերջնապէս հրաժարական տուած է Պրուսայի առաջ-նորդութենէն :

—Կրօնական Ժողովն իւր վերջին նիստին մէջ որոշեց չըջարեալականով ծանուցանել վիճակաւոր առաջնորդներու, Պատր. Փո-ծանորդներու և վանահայրերու որ ասկից ետքը ոչ զոր կոչեն սարկաւազութեան և վարդապետութեան, մինչեւ որ չընդունին կրօնական Ժողովին հաւանութիւնը և ըն-ծայացուներն իրենց կանոնաւոր ուսումը Կ. Պոլսոյ Պատրիարքութեան դպրեմանքին մէջ չստանան :

—Փահիրէէն կը հաղորդեն թէ տեղւոյն Ազգ. Առաջնորդարանին գէմ բացուած ժառանգական կարեւոր դատ մը իր լու-ծումն ստացեր է վերջապէս : 1864ին մեռ-նող բարեյիշատակ Կարապետ աղա Փա-լոստեանի կտակին զօրութեամբ՝ առաջ-նորդարանը տարուէ տարի կը գանձէ զուտ արգիւնք 500—600 օսմ. ոսկի : Այս գու-մարին գրէթէ կէսը կը գանձէր հանգուց-եալին մահէն, 1864էն ի վեր, և ամ-բողջն սկսած է գանձել, ըստ տրամա-դրութեան կտակի, անոր կնոջ մահէն ետք, որ տեղի ունեցած է 1888ին : Ե-գիպտոսի հայ հռոմէականներէն Եղիա-զարեան և Հանըմեան ընտանիքները դատ բացած էին այս կտակին դէմ, 1,580, 121 դրուչ պահանջելով իբրեւ իրենց բաժին ինկող գումար մը : Փահիրէի խառն դա-տարանի նախագատ ատեանը զբաղեր է այս դատով և ապրիլ 4ին տուեր է իր վճիռն, որով հայոց առաջնորդարանն ամբողջապէս տէր կը հռչակուի յիշեալ կտակին : Կը լսուի թէ Եղիազարեանք եւ Հանըմեանք վերաքննիչ ատենին պիտի դիմեն :

Ն Ե Ր Ք Ի Ն

Մաքսային վերատեսուչ Հասան Ֆէհ-մի փաշա, Բ. Դրան արտաքին թղթակ-ցութեանց քարտուղար Նուրի Պէյ և Կայս. թիկնապահ Թէյֆիդ պէյ, որք Իտալիոյ թագաւորին ամուսնութեան քսանեւհինգ-ամեակին առթիւ Հռոմ կը գտնուէին, Ումպէրթօ թագաւորին և Մարկարիտա թագուհին ներկայացեր են ընկերակցու-թեամբ օսմ. դեսպան Մահմուտ Նէտիմ պէյի և դեսպանատան պաշտօնեայնեան Հասան Ֆէհմի փաշա Ումպէրթօ թագաւո-րին յանձներ է վեհ. Սուլթանին մէկ նա-մակը : Այս առթիւ Իտալիոյ թագաւորին ու օսմ. պատուիրակին կողմէ բանախօ-սութիւնք եղեր են երկու տէրութեանց միջեւ կեցած բարեկամական յարաբերու-թիւններուն վրայ : Ումպէրթօ թագաւոր համակրալից խօսքերով զրուատեր է վեհ. Սուլթանի բարձր ձիւքերը : Պատուիրակ-ները ճամբայ են Պոլիս գալու :

—Մալաթիոյ երկրաշարժին պատճա-ռած աղէտներուն նկատմամբ յատուկ յանձնաժողովի մը կողմէ պատրաստուած տեղեկագրի մը համաձայն, ընդամենը 885 անձ մեռած են, և 164 անձ վիրաւոր-ուած : 7262 սենեակ և 2719 տուն աւե-րակ դարձած են բոլորովին : 10020 զա-նազան կենդանիներ կորեր են : 31 մզկիթ բոլորովին աւերակ դարձած են, 95 մըդ-կիթ մասամբ վրած և 13 ֆլաստուած :

—Էնկիւրիէն 60 քիլոմէթր հեռուն գտնուած Հիմանէ՝ գաւառակին համար թղթատարական երթեւեկութիւն մը հա-տատուած է, շաբաթը մէկ անգամ ա-ւանդ՝ յանձնարարեալ և պարզ նամակ-ներ և այլն փոխադրելու համար :

—Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանատան առաջին քարտուղար Պ. Նիւպէրի ուրիշ պաշտօնի կոչուեր է :

—Վինիէ ծովակալն, հրամատար Մի-ջերկրականի Ֆրանսական նաւատորմին, երեքշաբթի իրիկուն Կ. Պոլիս ժամանեց Թրո-լ չըջուն մարտանաւով :

—Վեհ. Սուլթանն հրամայած է որ Կ. Պոլսոյ արուեստահանդէսը այնպիսի եղա-նակով մը հաստատուի որ աւելի երկրա-

գործներու համար յստացիութեան ուղեցոյց մը ըլլայ :

—Կարնոյ Քլի դատաւիկին մէջ պաճարաբաժնի ծագած ըլլալով, ձեռնհաս իշխանութիւնն հարկ եղած իջնոցները ձեռք առած է այդ տիտիւն հարակուսմն արգելելու համար :

—Վեհ. Սուլթանը Զանթայի երկրաշարժէն արկածեալ զժրտիտներուն 500 ոսկի շնորհեց :

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Իսլանտական ծրագիրը երկրորդ ընթերցումով ընդունուեցաւ Անգլիոյ երեսփ. ժողովին կողմէ, 304ի դէմ 347 քուէով, այսինքն 43 քուէի մեծամասնութեամբ : Պ. Կլաւսթոն խնդրեր է որ յօդուած առ յօդուած քննուի սոյն ծրագիրը, մայիս 4ի նիստին մէջ : Այս առթիւ Հէնրի Ճէյմս, նախկին աղատական ընդհանուր գատախաղը, նորէն դէմ խօսեր է ծրագրին :

—Սերպիոյ Ալեքսանտր թագաւորը ներկայ ամրան միջոցին պիտի այցելէ քանի մը մայրաքաղաքներ, իր գահակալութիւնն անձամբ ալ ծանուցանելու վեհապետներուն : Սերպիայէն եկած լուրերը դո՛ւնացուցիչ են, և կը ցուցունեն թէ սիրով ընդունուած է պատանի թագաւորին իշխանութիւնը :

—Կուրքօ զօրավար, ռուսական Լեհաստանի կուսակալն ու հրամատարն, այսօրեւր Փարիզ կ'երթայ, ինքզինքը զարմանելու : Բայց ոչ որ կը հաւատայ իր հրահրութեան, և կը կարծուի թէ Ֆրանսայի և Ռուսիոյ միջեւ բանակցութիւն մը կատարելու պաշտօն ունի :

—Կը հաւատեն թէ անգլ. կառավարութիւնն հաւաներ է Տրէզանի առողջապահական ղեկավարութեանը որոշումներուն :

—Կը հաւատեն թէ զրամական քիւսպանախորհուրդը մայիս 18/30ին վերադառնալով պիտի գումարի Պրուսիայի մէջ :

—Տէյլ Նէ-լ կ'իմանայ թէ Զարը Նաթուի Թագուհիին խոտաւոր է չընդգրկմանալ Սերպիոյ թագաւորին և իր աղջկան՝ Քսենիա մեծ-ղբաւհիին ամուսնութեան խորհուրդին, պայմանով սակայն որ

Միլան թագաւորը և Նաթուի թագուհին նախ հաշտուին և նորէն միասին բնակին :

—Վիլհելմ կայսեր և Աւստրիա կայսրուհիին Հռոմ հասնելուն առթիւ Իտալիոյ մայրաքաղաքին բնակիչներու թիւին վրայ 150էն մինչև 200 հազար հոգիի յաւելում եղած է :

—Պ. Ֆոն Քափրլիփ յայտարարեր է Բայթաթակի զինուորական յանձնախումբին առջեւ թէ կարելի է որ Երրեակ-Նիզակահցութեան վերանորոգման հիմերը փոխուին :

—Վերսիի Ֆալաթաքը անցեալ շաբաթ զիշեր ի Հռոմ առաջին տնգամ ներկայացուեցաւ Քոստանդի թաւրոնին մէջ ի ներկայութեան թագաւորին, թագուհիին, նախարարապետ Պ. Ճոլիգլիի, նախորդ նախարարապետ Պ. Քրիսթիի, ղեկավարներու և այլ ականաւոր անձերու : Հանդիսականները եռանդաւոր ծափահարութիւններով ընդունեցին Վերսին և իր գործը, և թագաւորն իր օթեակն հրաւիրելով հոն բազմեցուց զայն բուռն ծափերու մէջտեղ :

—Պուլիարիոյ մէջ ամառոյս դէպի վերջը մեծ Սոպրանէի ընտրութիւնները պիտի կատարուին, և գրէթէ միայն նախարարական երեսփոխաններէ պիտի կազմուի Ազգային նոր ժողովն : Ֆերտինանտ իշխան իր նորապսակ կնոջ հետ ներկայ պիտի գտնուի ժողովին բացման, եւ բացման ձառն ինք պիտի կարգայ պուլ-կարերէն, զոր հիմա շատ լաւ կը խօսի :

ՄԵՐ ԳՆՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ազգայնականութիւն	ՄԱՐՄՈՒՏ	Է.Ֆ. ՍԱՆՏԱՆԵԱՆ
Պաշտօն	ԿԱՐԱՊԵՏ	ՍԱՆՏԱՆԵԱՆ
Խորհուրդ	ՌԱԻՔԵՆ	ԶԱՊԱՐԵԱՆ
Գրասէն	ՅԱՐՈՒԹԻՆ	ՄԱՐԹԱՅԵԱՆՅ
Աշխատանք	ԱՐՏԱՇԷՍ	ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
Նիւստիար	ՄԻԶԱՆ	ԱԹԱՆԱՅԵԱՆ
Գործակալ	ՏՕՔԹՈՒ	ՆԷՎՐՈՒԶԵԱՆ
Տրագիգոն	ՅԱՆՈՒ	ՆԱՆԱՐՇ

ԱՐՏՈՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻԹԻԼԻՃՅԱՆ

Ի Տպարանի ԱՐՆԵԼԷՔ Եւ ՄԱՍԻՍ լրագրաց

